



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

քաղաք Հրազդան

25 ՄԱՐՏԻ 2021թ.

**ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Վիգեն Գրիգորյանը, Մելսիկ Զաքարյանը, Խաչիկ Մուրադյանը, Ռոմիկ Ներսիսյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վարուժան Մաֆարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի
N 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՌՈՒԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի.

Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 25-ի N 03 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 176-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող ոչ պիտանի գույքի դուրս գրման մասին
3. Ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին
4. Վանիկ Աղամյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
5. Ռոբերտ Ծատուրյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
6. Թամարա Աբրահամյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
7. Կադաստրային քարտեզում հայտնաբերված անճշտության ուղղում կատարելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին
8. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

9. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
10. 0.01554 հա մակերեսով հողամասի նպատակային, գործառնական նշանակության փոփոխության և շինության գործառական նշանակության փոփոխության մասին
11. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 13-ի N 53 որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչելու մասին
12. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 164, N 165 և 2021 թվականի փետրվարի 25-ի N 39 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին
13. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին
14. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
15. Սուբվենցիայի հայտերին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի N 43 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
16. Տեղական վճարների արտոնություն կիրառելու մասին
17. Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օտարելու մասին
18. Կոտայքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Հրազդան համայնքից ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի առաջադրման մասին
19. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 15-ի N 65 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 53/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 176-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 176-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 54-Ն/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի 1-ին մասով.

Թույլատրել դուրս գրելու Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող մաշված, ժամկետանց, այլևս գործածության ոչ պիտանի գույքը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55/

Լսեցին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Պետրոս Դուրյան փողոցի 12 շենքի 46 բնակարանի բնակչուհի Ռուզաննա Ավետիսյանի 2021 թվականի մարտի 15-ի Դ-175 դիմումը.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10.07.01 ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ գումար որպես միանվագ օգնության գումար հատկացնել Հրազդան քաղաքի Պետրոս Դուրյան փողոցի 12 շենքի 46 բնակարանի բնակչուհի Ռուզաննա Ավետիսյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56/

Լսեցին

ՎԱՆԻԿ ԱԴԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Վանիկ Ադամյանի 2021 թվականի փետրվարի 22-ի դիմումը.

1. Ուղղակի վաճառքով օտարել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց թիվ 16/4 հասցեում գտնվող, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 205 շենքի թիվ 7 բնակարանի բնակիչ Վանիկ Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող 35.11քմ մակերեսով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական 1690360, տրված՝ 2005 թվականի մարտի 22-ին)՝ 101 400 /մեկ հարյուր մեկ հազար չորս հարյուր / դրամ կադաստրային արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 57/

Լսեցին

ՌՈՒԲԵՐՏ ԾԱՏՈՒԴՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Ռոբերտ Ծատուրյանի լիազոր անձ Սլավիկ Եղիազարյանի 2021 թվականի մարտի 03-ի դիմումը:

1. Ուղղակի վաճառքով օտարել Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 20/19 հասցեում գտնվող, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 20 շենքի թիվ 14 բնակարանի բնակիչ Ռոբերտ Ծատուրյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող 37.82քմ մակերեսով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 03022021-07-0054, գաղտնաբառ՝ 73KFZTA96JE6)՝ 258 500 /երկու հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր / դրամ կադաստրային արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 58/

Լսեցին

ԹԱՍԱՐԱ ԱՐԴԱՀԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Թամարա Աբրահամյանի 2021 թվականի մարտի 22-ի դիմումը.

1. Ուղղակի վաճառքով օտարել Հրազդան քաղաքի Մարշալ Բաղրամյան թաղամաս 121/5 հասցեում գտնվող, Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 121 շենքի թիվ 27 բնակարանի բնակիչ Թամարա Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող 110.0քմ մակերեսով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (անշարժ գույքի նկատմամբ՝ իրավունքների պետական գրանցման վկայական N18032020-07-0127, գաղտնաբառ՝ 4N3UWKBBSF7V)՝ 488 620 /չորս հարյուր ութսունութ հազար վեց հարյուր քսան/ դրամ կադաստրային արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 59/

Լսեցին

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի N186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջով.

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 1831-Ն որոշմամբ՝ քարտեզագրման անճշտության հետևանքով, որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի Հայ Ֆիդայիների փողոց 37 հասցեում գտնվող 1432.9քմ մակերեսով (ծածկագիր՝ 0302-0002) հողամասը ճանաչել Հրազդան համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 60/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և

Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով.

1. Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված, Միկրոշրջան թաղամաս Պուրակային փողոց թիվ 10/2 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը՝ 20.0քմ մակերեսով (ավտոտնակ կառուցելու)՝ 12 000 (տասներկու հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 61/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետով.

1. Թույլատրել մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց 64/1 հասցեում գտնվող 236.0քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 31 000 (երեսունմեկ հազար) դրամ մեկնարկային վարձավճարով: Մրցույթի մասնակցության մուտքի վճարը սահմանել 2000 (երկու հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել 1000 (մեկ հազար) դրամ՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0623-0100):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 62/

Լսեցին

0.01554 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն և 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N1597 որոշումներով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^Յ-րդ հոդվածի 9-րդ մասով, հաշվի առնելով, որ կադաստրային քարտեզում 0.01554հա մակերեսով հողամասը ընդգրկված է բնակավայրերի նպատակային նշանակության սահմաններում և հիմք ընդունելով Վարուժան Զոհրաբյանի 2021 թվականի փետրվարի 05-ի դիմումը.

1. Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կոճոռ թաղամասի թիվ 94 տան բնակիչ Վարուժան Զոհրաբյանին սեփականություն իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 03022021-07-0007, գաղտնաբառ՝ 11TAGXJTY5LW) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 30/21 հասցեում գտնվող 0.01554հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վրա գտնվող շինության գործառնական նշանակությունը փոփոխել առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի:

3. Սույն որոշման ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 53 ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԿԵՏԻ 8-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԸ ՈՒՃԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 13-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին» N 53 որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 164, N 165 ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 39 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին» N 164 որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում «350 000(երեք հարյուր հիսուն հազար)» բառերը փոխարինել «922 000 (ինը հարյուր քսաներկու հազար)» բառերով:

2. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N 165 որոշման 1-ին կետում «7 000 (յոթ հազար)» բառերը փոխարինել «15 000 (տասնհինգ հազար)» բառերով:

3. Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի «Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N 39 որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «(հինգ հազար)» բառերը փոխարինել «(տասներկու հազար)» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 65/

Լսեցին

**ՀՐԱՀՂԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ
ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով.

1. Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հետևյալ հողամասերը.

1) Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 71/5 հասցեում գտնվող 120.0քմակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 821 000 (ութ հարյուր քսանմեկ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0702-0057):

2) Վանատուր թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 66/10 հասցեում գտնվող 122.2քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 543 000 (հինգ հարյուր քառասուներեք հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0522-0036):

2. Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
3. Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 66/

Լսեցին

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետով.

1. Թույլատրել մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված Ջրառատ թաղամասի Հրազդան-Զովաբեր-Դղմաշեն 8 հասցեում գտնվող 11.0հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասը՝ 24 000 000 (քսանչորս միլիոն) դրամ մեկնարկային վարձավճարով: Մրցութի մասնակցության մուտքի վճարը սահմանել 2000 (երկու հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 20 (քսան) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0878-0009):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 67/

Լսեցին

**ՍՈՒԲՎԵՆՅԻԱՅԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 43 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՎԱՆՈՒՀԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 12-րդ կետով.

1. Հավանություն տալ 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հետևյալ հայտերին.

- 1) Հրազդան համայնքի խաղահրապարակների կառուցում. ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 62857100 (վաթսուներկու միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար հարյուր) դրամ,
- 2) Հրազդան համայնքի վարչական տարածքում կանգառների կառուցում, տարածքի բարեկարգում. ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 55000000 (հիսունհինգ միլիոն) դրամ,
- 3) Հրազդան համայնքի Թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի վերակառուցման և հիմնանորոգման և թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում. ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 170000000 (հարյուր յոթանասուն միլիոն) դրամ,
- 4) Բազմաֆունկցիոնալ մեքենայի ձեռքբերում. ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 70000000 (յոթանասուն միլիոն) դրամ,
- 5) Հրազդան համայնքի բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքների իրականացում և թաղամասերն իրար միացնող հատվածի աստիճանավանդակի հիմնանորոգում. ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 269000000 (երկու հարյուր վաթսուներեք միլիոն) դրամ,
- 6) Հրազդան համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների իրականացում. ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 236000000 (երկու հարյուր երեսունվեց միլիոն) դրամ,
- 7) Հրազդան համայնքի ներհամայնքային ճանապարհների լուսավորության ցանցի արդիականացում. ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 99102000 (իննսուներեք միլիոն հարյուր երկու հազար) դրամ,
- 8) Հրազդան համայնքի երաժշտական դպրոցի և մշակույթի տան տանիքի վերակառուցման աշխատանքների իրականացում. ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 53000000 (հիսուներեք միլիոն) դրամ :

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 25-ի «Սուբվենցիայի հայտերին հավանություն տալու մասին» N 43 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 68/

Լսեցին

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ, արվեստի և երաժշտական դպրոցներ, մշակութային և սպորտային հաստատություններ հաճախող երեխաների տեղական վճարները ուսումնասիրելու և զեղչելու նպատակով ստեղծված հանձնաժողովի 2021 թվականի մարտի 23-ի թիվ 2 արձանագրությունը.

1. 2021 թվականի մարտ ամսից մինչև դեկտեմբեր ամիսը ներառյալ տեղական վճարների վճարումից 50 %-ի չափով նվազեցնել Հրազդան համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ, արվեստի և երաժշտական դպրոցներ, մշակութային և սպորտային հաստատություններ հաճախող հետևյալ երեխաների վարձավճարները.

1) Մարի Հովհաննեսի Մուրադյան - «Հրազդան համայնքի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային

նչ առևտրային կազմակերպություն,

2) Արփի Լևոնի Ալեքսանյան - «Հրազդան համայնքի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

3) Գևորգ Վարդանի Հարությունյան - «Հրազդան համայնքի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

4) Քնարիկ Արմենի Բալաբեկյան - «Հրազդան համայնքի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

5) Սոնա Աշոտի Դուլյան - «Երվանդ Քոչարի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

6) Ադրիանա Սենիկի Ավետիսյան - «Հրազդան համայնքի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

7) Գերասիմ Էդիկի Ավետիսյան - «Հրազդան համայնքի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

8) Նարե Նարեկի Դանիելյան - «Կոստան Չարյանի անվան մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

9) Արսեն Էդգարի Հակոբյան - «Հրազդան համայնքի թիվ 15 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

10) Ինեսսա Էդվարդի Մելքոնյան - «Հրազդան համայնքի թիվ 13 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2.2021 թվականի մարտ ամսից մինչև նոյեմբեր ամիսը ներառյալ վարձավճարի վճարումից ազատել Հրազդան համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող հետևյալ երեխաների վարձավճարները.

1) Ֆրունզե Արմենի Թադևոսյան - «Հրազդան համայնքի թիվ 13 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

2) Մարի Արմանի Աբրահամյան - «Հրազդան համայնքի թիվ 12 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

3) Տիգրան Արմենի Բաբայան - «Հրազդան համայնքի թիվ 16 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

4) Արեգ Սամվելի Հովհաննիսյան - «Հրազդան համայնքի թիվ 15 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

5) Արսեն Արմենի Մարտիրոսյան - «Հրազդան համայնքի թիվ 15 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

6) Արտյոմ Սմբատի Թադևոսյան - «Հրազդան համայնքի թիվ 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Չեղարկված-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 69/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օտարել համայնքային ենթակայության կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 70/

Լսեցին

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՍԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԶԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի N 85- Ս որոշման հավելվածի 10-րդ կետով.

1. Կոտայքի մարզպետին առընթեր Երիտասարդական խորհրդի կազմում Հրազդան համայնքից ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրել «Հայի բռունցք» հասարակական կազմակերպության հիմնադիր Գարիկ Գվարդիկի Ադասյանին:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 71/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 15-Ի N 65 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՍ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 15-ի «Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» N 65 որոշումը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Հրազդանի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2637626) Հրազդան համայնքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոցի 16/1 հասցեում գտնվող շենքից 253.11քմ և 261.74քմ մակերեսներով երկու մասնաշենքերը 21 տարի ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրել «Հակոբյաններ» համահայկական մշակութային կենտրոն» հասարակական կազմակերպությանը 20 միլիոն դրամ գումարի չափով մասնաշենքերի վրա կապիտալ ծախսեր կատարելու պայմանով:

2. Սահմանել, որ մասնաշենքերը կարող են օգտագործվել միայն կրթական և (կամ) մշակութային նպատակներով:

3. Կապիտալ ծախսերը կատարել հետևյալ պայմաններով.

1) մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը կատարել 5 միլիոն դրամ գումարի չափով կապիտալ ծախսեր,

2) մինչև 2023 թվականի հունվարի 1-ը կատարել 15 միլիոն դրամ գումարի չափով կապիտալ ծախսեր,









3) մինչև 2023 թվականի հունվարի 1-ը ծախսերը փաստաթղթային կարգով չհիմնավորվելու դեպքում որոշումը կորցնում է ուժը, և շենքի վրա կատարված բարելավումները ենթակա չեն փոխհատուցման:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:


Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0


Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 72/

Ավագանու անդամներ՝

- ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ 
- ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ 
- ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ 
- ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ 
- ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ 
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ 
- ՄԿՐՏՅԱՆ ՌՈՒՍԱՄ 
- ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Վ. ՍԱՖԱՐՅԱՆ 

Նիստի արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը 





Հավելված
 Հրագրան համայնքի ավագանու
 2021 թվականի մարտի 25 -ի
 N 54 -Ն որոշման
 Հավելված
 Հրագրան համայնքի ավագանու
 2020 թվականի դեկտեմբերի 14 -ի
 N 176-Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝		1608567.0	1608567.0	145300.0
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160), այդ թվում՝	7100	331310.0	331310.0	x
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112), այդ թվում՝	7131	62000.0	62000.0	x
1111	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ		19000.0	19000.0	x
1111Ա	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ		12000.0	12000.0	x
1111Բ	ՀՈՂԻ ՀԱՐԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ		7000.0	7000.0	x
1112	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ		43000.0	43000.0	x
1112Ա	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ		12000.0	12000.0	x
1112Բ	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ-ՇԻՆ. ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ		31000.0	31000.0	x
1113	ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ		76500.0	76500.0	x
1113Ա	ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՖԻԶ. ԱՆՁԱՆՑԻՑ		38500.0	38500.0	x
1113Բ	ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲ. ԱՆՁԱՆՑԻՑ		38000.0	38000.0	x
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝	7136	147000.0	147000.0	x
1121Ա	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (ֆիզիկական անձանցից)		144000.0	144000.0	x
1121Բ	Գույքահարկ փոխադրամիջոցների համար (իրավաբանական անձանցից)		3000.0	3000.0	x
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝	7145	30810.0	30810.0	x
1131	Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144 + տող 1145), այդ թվում՝	71452	30810.0	30810.0	x

1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար (տող 1133 + տող 1334), որից՝		0.0	0.0	x
1133	աա) Հիմնական շինությունների համար		2000.0	2000.0	x
1133Ա	-մինչև 300 քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար		0.0	0.0	x
1133Բ	1133) տողում չնախատեսված օբյեկտների համար, որից		0.0	0.0	x
1133Գ	- 201-ից մինչև 500 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1133Դ	501-ից մինչև 1000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1133Ե	1001-ից մինչև 3000 քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1133Զ	3001-ից և ավելի քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0.0	0.0	x
1134Ա	-մինչև 20 քառ. մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1134Բ	- 20 և ավելի քառ.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար		0.0	0.0	x
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		200.0	200.0	x
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		100.0	100.0	x
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և/կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		11200.0	11200.0	x
1137Ա	- ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում		6200.0	6200.0	x
1137Բ	- ծխախոտի արտադր. վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շին. ներսում վաճառքի կազմակերպման դեպքում		5000.0	5000.0	x
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		0.0	0.0	x
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կեղուկ վառելիքի և /կամ/		3200.0	3200.0	x

	սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար				
1139-	ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐ-ՈՒՄ ԳՏՆՎ.ԽԱՆ-ԵՐՈՒՄ,ԿՐՊ-ԵՐՈՒՄ ՏԵԽՆ.ՀԵՂ-ԵՐԻ ՎԱՃ.ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ		1080.0	1080.0	x
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		950.0	950.0	x
1140Ա	- առևտրային օբյեկտների համար		0.0	0.0	x
1140Բ	- հանրային սնունդի և զվարճանքի օբյեկտների համար		0.0	0.0	x
1140Գ	- բաղնիքների (սաունաների) համար		0.0	0.0	x
1140Դ	- խաղատների կազմակերպման համար		0.0	0.0	x
1140Ե	- շահումով խաղերի կազմակերպման համար		0.0	0.0	x
1140Զ	- վիճակախաղերի կազմակերպման համար		0.0	0.0	x
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար		0.0	0.0	x
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		9000.0	9000.0	x
1142Ա	- ակոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար		0.0	0.0	x
1142Բ	- Թունդ ակոհոլ./սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար		0.0	0.0	x
1142Գ	- այլ արտաքին գովազդի համար		9000.0	9000.0	x
1142Դ	- դատարկ գովազդային վահանակների համար		0.0	0.0	x
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար		0.0	0.0	x
1144	ի) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ էրթոդային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		80.0	80.0	x
1145	լ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		400.0	400.0	x
1146	Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		1100.0	1100.0	x
1146Ա	- հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		0.0	0.0	x
1146Բ	- ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		0.0	0.0	x
1147	- համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար		500.0	500.0	x
1148	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉ.ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՂ.ՀՈԳԵՀԱՆԳՄԻ ԾԻՄԱՎԱՏ.ՇԱՌԱՅ.ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ	455200	500.0	500.0	x

	ՎՃԱՐ				
1149	ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎ.ՀԱՄԱՐ		500.0	500.0	x
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝	7146	15000.0	15000.0	x
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1152 + տող 1153), այդ թվում՝		15000.0	15000.0	x
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		5000.0	5000.0	x
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար		10000.0	10000.0	x
1160	1.5 Այլ հարկային եկամուտներ, (տող 1161 + տող 1165), այդ թվում՝	7161	0.0	0.0	x
1161	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ (տող 1162 + տող 1163 + տող 1164), որից՝		0.0	0.0	x
1162	ա) Եկամտահարկ		0.0	0.0	x
1163	բ) Շահութահարկ		0.0	0.0	x
1164	գ) Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ		0.0	0.0	x
1165	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ		0.0	0.0	x
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՉՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝	7300	989267.2	989267.2	0.0
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7311	0.0	0.0	x
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	0.0	x
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7312	0.0	x	0.0
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	x	0.0
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝	7321	0.0	0.0	x

	ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝				
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	0.0	x
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7322	0.0	x	0.0
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.0	x	0.0
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258), որից՝	7331	989267.2	989267.2	x
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		973864.9	973864.9	x
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1255 + տող 1256), այդ թվում՝		0.0	0.0	x
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		0.0	0.0	x
1256	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		0.0	0.0	x
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		15402.3	15402.3	x
1258	դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ, որից՝		0.0	0.0	x
1259	Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից		0.0	0.0	x
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1261 + տող 1262), այդ թվում՝	7332	0.0	x	0.0
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0	x	0.0
1262	բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ, որից՝		0.0	x	0.0
1263	Երևան քաղաքի համաքաղաքային նշանակության ծախսերի ֆինանսավորման նպատակով ձևավորված միջոցներից		0.0	x	0.0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝	7400	287989.8	287989.8	145300.0
1310	3.1 Տոկոսներ, այդ թվում՝	7411	0.0	x	0.0

1311	Բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ		0.0	x	0.0
1320	3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝	7412	0.0	0.0	x
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ)		0.0	0.0	x
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334), այդ թվում՝	7415	29883.5	29883.5	x
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		10000.0	10000.0	x
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		3500.0	3500.0	x
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		3000.0	3000.0	x
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		13383.5	13383.5	x
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, (տող 1341 + տող 1342 + տող 1343), այդ թվում՝	7421	91175.8	91175.8	x
1340Ա	ա)ՔԿԱԳ համար		0.0	0.0	x
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրազուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր		0.0	0.0	x
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		0.0	0.0	x
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ		0.0	0.0	x
1343Ա	Թիվ 2 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		836.0	836.0	x
1343Բ	Թիվ 4 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		4620.0	4620.0	x
1343Գ	Թիվ 5 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		4840.0	4840.0	x
1343Դ	Թիվ 6 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		4840.0	4840.0	x
1343Ե	Թիվ 7 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		3630.0	3630.0	x
1343Զ	Թիվ 8 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		5390.0	5390.0	x
1343Է	Թիվ 9 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		3190.0	3190.0	x
1343Ը	Թիվ 11 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		7040.0	7040.0	x
1343Թ	Թիվ 12 Մ/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		12980.0	12980.0	x

1343Ժ	Թիվ 13 Ս/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		6930.0	6930.0	x
1343Ի	Թիվ 15 Ս/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		5346.0	5346.0	x
1343Լ	Թիվ 16 Ս/ՀՈԱԿԻ Ծնողական միջոցներ		7040.0	7040.0	x
1343Խ	Արամ Խաչատրյանի անվան N1 երաժշտական դպրոցի ծնողական միջոցներ		5062.5	5062.5	x
1343Մ	Առնո Բաբաջանյանի անվան N2 երաժշտական դպրոցի ծնողական միջոցներ		6331.5	6331.5	x
1343Կ	ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՏՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ		2146.5	2146.5	x
1343Հ	ԵՐՎԱՆԻ ՔՈՉԱՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՏՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ		3159.0	3159.0	x
1343Ձ	ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵՔ		0.0	0.0	x
1343Ղ	ՎԱՀԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՄՄՈՒԿ		2320.0	2320.0	x
1344	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		5474.3	5474.3	x
1344Ա	ա)ՔԿԱԳ համար		5474.3	5474.3	x
1344Բ	բ)Անասնաբույժական ծառայության համար		0.0	0.0	x
1350	3.5 Վարչական գանձումներ, (տող 1351 + տող 1352), այդ թվում՝	7422	135700.0	135700.0	x
1351	Տեղական վճարներ		135700.0	135700.0	x
1351Ա	-տեղական վճարներ հողհատկացման չափագրման համար		0.0	0.0	x
1351Բ	-տեղական վճարներ աճորդի մասնակցելու համար		1200.0	1200.0	x
1351Գ	- տեղական վճարներ շինարարության ավարտը փաստագրելու համար		4000.0	4000.0	x
